Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N -----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի N 325-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 09-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 325-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 09-ի N 325-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

Երևան քաղաքի ավագանու 09.02.2021 թվականի հ.325-Ա որոշմամբ լրացումներ ու փոփոխություններ են իրականացվել Երևան քաղաքի Ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի հ.10-Ա որոշման մեջ:

Մասնավորապես Երևան քաղաքի ավագանին որոշել է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10 որոշման.

1. N1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.
1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլխի 1-ին կետը լրացնել 8.1-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«8.1) քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժին».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման N1 հավելվածի «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլխի 1-ին կետի 5-րդ և 8-րդ ենթակետերը.
2. N2 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.
1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.6-րդ կետը լրացնել նոր տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

	Քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժին				
1	բաժնի պետ	1	291000		291000
2	բաժնի պետի տեղակալ	2	250000		500000
3	գլխավոր մասնագետը	6	225000		1350000
4	առաջատար մասնագետ	15	217000		3285000
5	առաջին կարգի մասնագետ	9	207000		1863000
	ԸՆԴԱՄԵՆԸ	33			7289000

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.6-րդ կետում ««Ամբողջը» տողի «185» և «39622000» թվերը համապատասխանաբար փոխարինել «183» և ««39130000» թվերով:

3) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողի «1285» և «277782000» թվերը համապատասխանաբար փոխարինել «1283» և «277290000» թվերով.

4) Ուժը կորցրած ճանաչել «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժին» և «Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին» տողերը.

5) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1539» և «322210800» թվերը փոխարինել համապատասխանաբար «1537» և «321718800» թվերով.

6) «Ամբողջը» տողում «2133,5» և «463727350» թվերը փոխարինել «2131,5» և « 463235350» թվերով:

Այսպիսով Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի հ.325-Ա որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի «Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման» և «Քաղաքաշինության և հողօգտագործման բաժինների» փոխարեն ստեղծվել է մեկ ընդհանուր՝ «Քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժին»:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև համապատասխան բաժինների աշխատակիցների կողմից, ՀՀ օրենսդրության համապատասխան, Երևան

քաղաքի Կենտրոն վարչական շրջանում պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով ուսումնասիրվել է Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի հ.325-Ա որոշմամբ ստեղծված նոր բաժնի արդյունավետությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

1. Երևանի քաղաքապետարանի առանձնացված ստորաբաժանումներ համարվող թվով 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերից 11-ում Երևան քաղաքի ավագանու փետրվարի 9-ի հ.325-Ա որոշմամբ միավորվող բաժինները իրենց գործունեությունը իրականցնում են առանձին-առանձին:

2. Անհրաժեշտ է փաստել նաև այն հանգամանքը, որ օպտիմալացման մասին տվյալ պարագայում խոսք գնալ չի կարող, քանի որ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի «Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման» և «Քաղաքաշինության և հողօգտագործման բաժինների» աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմում է 35 հաստիքային միավոր, մինչդեռ Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի հ.325-Ա որոշմամբ ստեղծվելիք «Քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժնի» աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմելու է 33 հաստիքային միավոր, այսինքն ընդամենը 2 հաստիքային միավոր պակաս:

Միաժամանակ պետք է նշել, որ որոշման կատարման արդյունքում, աշխատանքային պայմանագիրը լուծվելու պարագայում, անհրաժեշտ է լինելու աշխատողների հետ կատարել վերջնահաշվարկ, ինչպես նաև վճարել արձակման նպաստ:

3. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի հ.325-Ա որոշմամբ չեն հստակեցվել նորաստեղծ բաժնի պետի, ինչպես նաև աշխատակիցների պաշտոնների անձնագրերում կատարվելիք փոփոխությունները՝ ըստ գործնականում կիրառման ենթակա գործառույթների: Փաստացի ստացվում է մի իրավիճակ, երբ միավորվող բաժինների գործառույթները չեն կրկնվում, բայց ստեղծվելիք «Քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժնի» պետը, ինչպես նաև աշխատակիցները, ովքեր ներկայումս իրականացնում են կանոնադրություններով, Երևան քաղաքի ավագանու և Երևանի քաղաքապետի որոշումներով իրենց վերապահված պարտականությունները, պետք է իրականացնեն մի շարք գործառույթներ, որոնք վերաբերվում են տարբեր ոլորտների:

4. Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտներում իրականացվող գործառությները մեկտեղելու արդյուքնում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազամի այլ ստորաբաժանումների հետ համագործակցությունը դառնալու է ոչ արդյունավետ, քանի որ նորաստեղծ բաժինը իրեն վերապահված գործառույթները իրականացնելիս անմիջական

առնչություն է ունենալու Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առնվազն թվով 5 /հինգ/ ստորաբաժանումների հետ, որոնք ունեն մասնագիտական գործառույթներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման և քաղաքաշինության և հողօգտագործման բաժինների գործառույթների արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով, Երևան քաղաքի ավագանու քննարկման է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի N 325-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 09-ի N325-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի N 325-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 09-ի N325-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ